

ՔՐԻՍՏԻՆԵ ԿՈՍՏԻԿՅԱՆ

ՊԱՐՄԿԱԼԵԶՈՒ ՎԱՎԵՐԱԳՐԵՐԸ ՄԱԿՈՒԻ Ս. ԹԱԴԵՈՍ ՎԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Մակվի Ս. Թադեոս Առաքյալի (այսուհետև՝ Ս. Թադեի) վանքը, որը հայտնի է նաև Արտագի վանք և Ղարաքիլիսա անուններով, հայոց հնագույն վանքերից է։ Նրա պատմության սկզբնաղբյուրներից շատերն են պահպանվել, որոնց հիման վրա ուսումնասիրություններ են կատարել հայ և օտար հետազոտողներ¹։

Քանի որ վանքը դարեր շարունակ գտնվել է իրանական իշխանությունների տիրապետության տակ, նրա պատմության սկզբնաղբյուրների մեջ հատուկ տեղ են գրավում պարսկալեզու սկզբնաղբյուրները և հատկապես վավերագրերը, որոնք հիմնականում պահպանվել են Երևանի Մատենադարանում և Թավրիզի Հայոց առաջնորդարանի թանգարանում։

Թավրիզի Հայոց առաջնորդարանի թանգարանի վավերագրերից Մակվի Ս. Թադեի վանքին վերաբերող մի շարք վավերագրերի պարսկերեն տեքստերը հրատարակվել են Իրանում 1971-72թ. տպագրված «Հուր» ամսագրի համարներում։ Այս և մի շարք այլ (ընդամենը 18) պարսկերեն վավերագրեր ընդգրկվել են Ա. Հախնազարյանի ատենախոսության մեջ²։

Վանքի պատմությանը վերաբերող Մատենադարանի հրովարտակներից երկուսը հրատարակվել են Հ. Փափագյանի կողմից «Մատենադարանի պարսկերեն հրովարտակների» առաջին պրակում³։ Այդ հրովարտակներից առաջինը Ադ-Կոյունլու Ռուսթամ փադիշահի 1493թ. հրովարտակն է ուղղված Սարգիս կաթողիկոսին, որով կարգադրում է նեղություն չտալ Մակվի Ս. Թադեի վանքի վանահայր Ջաքարիա վարդապետին։ Երկրորդը Սեֆյան շահ Թահմասպ Ա-ի 1562թ. հրովարտակն է Մակվի Ս. Թադեի վանքի համդի սահմանների ու ռոտզման կարգի և «Կարիզ, Մահլազան և Կորուղ» գյուղերից զանձվող եկեղեցական տուրքերի մասին։

Բացի վերոհիշյալ հրովարտակները Երևանի Մատենադարանում պահվում են Ս. Թադեի վանքին վերաբերող շուրջ 30 պարսկերեն վավե-

րագրեր, որոնց ուսումնասիրությունն ու հրատարակումը կարող է նոր մանրամասներով ու ճշգրտումներով հարստացնել նրա պատմությունը:

Ս. Թադեի վանքի ընդարձակ թեմի ու վիճակի մեջ ըստ XVIII դարի կաթողիկոսական կոնդակների մտնում էին «Թավրիզը, Մուժանդարը, Տուխուրկանը, Մարադան, Խոյը, Չորսը, Մակուն և դրանց բոլոր շրջակա գյուղերը», նաև Բայսուգեաը, Սահաթը և Սիանդամունը: Վանքին է պատկանել նաև Ղարիզ, Մահլազան և Ղորտոլ (կամ Կորտոլ) գյուղերի⁶ չրադլըը⁷ գանձելու իրավունքը⁸, որոնց նկատմամբ հավակնություններ է ունեցել նաև Դարաշամբի Մադարդա (Ստեփանոս Նախավկայի) վանքը: Դարեր շարունակ այս գյուղերը երկու վանքերի վեճի առարկան են եղել⁹: Պահպանվել են մի քանի հրովարտականեր, որոնք հաստատում են այդ գյուղերից չրադլը հարկը ստանալու Ս. Թադեի վանքի իրավունքը¹⁰, ինչպես նաև՝ հրովարտականեր և կաթողիկոսական կոնդակներ, որոնք հաստատում են այդ գյուղերի գտնվելը Ստեփանոս Նախավկայի վանքի թեմի և վիճակի մեջ¹¹:

Վանքն ունեցել է խոշոր կալվածքներ: XX դարի սկզբին Ֆրանգյանը Ս. Թադեի վանքի վանահոր վկայության հիման վրա թվում է հետևյալ գյուղերը որպես անցյալում Ս. Թադեի վանքին պատկանող բնակավայրեր՝ «Մըզրա»¹², Խմրի-դաշ¹³, Ղարաքիլիսա¹⁴, Դիպակ-դաշ¹⁵, Աղբուլաղ¹⁶, Ղարաբուլքի¹⁷, Սոնա-Բուլաղ¹⁸, Աղդաշ¹⁹, Մահլազան²⁰, Կորտոլ²¹, Նուշիկ, Քեռեռևան²², Չորս²³, Ռահան²⁴»՝ նշելով նրանցից յուրաքանչյուրի մոտավոր հեռավորությունը վանքից²⁵: Սակայն այս գյուղերը, որոնցից շատերը դեռևս 1828թ. դեպի Ռուսաստանի տիրապետության տակ անցած հայկական տարածքները կազմակերպված արտագաղթի հետևանքով հայերից լքվել են ու այժմ կամ անբնակ են կամ՝ վերաբնակեցված իրանցի թուրքերի կամ քրդերի կողմից, տարբեր ժամանակներում և տարբեր ձևերով կամ տարբեր հարկերի զանձման իրավունքով են պատկանել Ս. Թադեի վանքին: Վանքի կալվածքների մասին առատ տվյալներ են պահպանվել հայերեն ու պարսկերեն վավերագրերում, ինչպես նաև հայոց ձեռագրերի հիշատակարաններում:

Դեռևս հնագույն ժամանակներից Ս. Թադեի վանքը իր բաժինն (հսկկաբե²⁶) է ունեցել Ղարաքիլիսա գյուղի քյարիզից (ստորգետնյա ջրանցք), որ հաստատված է եղել 6 մասից 3-ի չափով:

Հայկական աղբյուրները սկսած 1656 թվականից մատնանշում են Վարազմակերտում Ս. Թադեի վանքի ընդարձակ կալվածքների գոյության փաստը: Մատենադարանի մի շարք կալվածագրերի բովանդակության համաձայն՝ 1663թ. գնվում ու Մակվի Ս. Թադեի վանքին վակֆ²⁸ է արվում Յոմրիդաշ գյուղի²⁹ 6 դանգ³⁰ մուլը, 1685/1686թթ.՝ Ղարաքիլիսա գյուղն ամբողջովին³¹: 1680թ. կազմված շար'ի³² արձանագրությամբ հաստատվում է ավելի վաղ շրջանում գնված Նուշիկ (Քեշիշիք) գյուղի վակֆային պատկանելությունը Թադեի վանքին³³: Հայերեն մի քանի վա-

վերագրեր ևս վկայում են վանքի Նուշիկում ունեցած կալվածքների մասին³⁴։ Նույն շրջանում կազմված մեկ այլ շար'ի արձանագրությունն հաստատում է Շուրաք մագրայի³⁵ պատկանելությունը Ս. Թադեի առաջնորդ Սարգիս վանահորը³⁶։

XVII դարի երկրորդ կեսին Ս. Թադեի կալվածքների մասին հատուկ հոգ են տանում վանքի Իսահակ Մակվեցի և Սարգիս Կաֆայեցի առաջնորդները։ Նրանց նախաձեռնությամբ են գնվում վերը նշված կալվածքների մի մասը, նաև կազմվում համախոսականներ ի հաստատումն վանքին պատկանող կալվածքների։ 1679թ. կազմված հայերեն կալվածագրում թվարկվում ու հաստատվում են վանքի կալվածքները Նուշիկում, Վարազմակերտում ու Մակվում³⁷։ Պարսկալեզու մեկ այլ համախոսական Մակվի, Չորսի, Սալմաստի ու Խոյի մի շարք հեղինակավոր անձանց ու պետական պաշտոնյաների անուններից հաստատում է, որ Մակվի մահալի Յոմրիդաշի Մուհամմադբենդ, Ղարաքիլիսայի Քոնդեզբենդ, Ռեյհանլունների Շուրաք և Դիբաքի Շամսիբենդ մագրայները գնված լինելով Ղարաքիլիսայի Սարգիս ու Սահակ առաջնորդների կողմից, օրինական կալվածագրերի հիման վրա պատկանում են նրանց³⁸։

Կալվածագրերի հիման վրա հաստատվում են նաև վանքին պատկանող այգիների ու հողային կալվածքների գոյությունը Մակու³⁹ և Խոյ⁴⁰ քաղաքներում, Խոյի շրջանի Դիզա գյուղում⁴¹, «Կօրօվանում»⁴² և այլ վայրերում, որոնց անվանումները չեն նշվում⁴³։

1824 թվականին Ս. Թադեի վանքի առաջնորդ Բարսեղ եպիսկոպոսը կազմում է վանքի Դեհխարդանում, Խոյում և Բայազետում ունեցած կալվածքների ցուցակը։ Այդ ցուցակում հստակ նշվում են այդ շրջանում վանքի ենթակայության տակ գտնվող ութ հողային տարածքներ Դեհխարդանում, Խոյ քաղաքում և նրա շրջակա «Քենէյի, Յոնջալըխ» վայրերում⁴⁴, ինչպես նաև նախկինում վանքին ենթակա, բայց այդ ժամանակներում արդեն վանքի տնօրինության տակից դուրս եկած կալվածքները Խոյի մոտ գտնվող «Փեռայ և Քենէյի» և Չորսի նահանգի «Տիզե» գյուղերում⁴⁵։ Ցուցակից ակնհայտ է դառնում, որ վանքն ունեցել է մեկ տասնյակից ավելի տներ Խոյում ու Բայազետում, որոնք վարձով էին տրվում։

Ղարաթուրքի գյուղից հարկազանծումներ անելու իրավունքը Ս. Թադեի վանքին է շնորհվում 1814թ. թագաժառանգ Աբաս Սիրզայի հրամանագրով⁴⁶ և հետագայում՝ XIX դարում, մի քանի անգամ վերահաստատվում այլ հրովարտակներով⁴⁷։

Ընդհանրապես XIX դարի առաջին կեսում Սիմեոն արքեպիսկոպոսի առաջնորդության տարիներին Ս. Թադեի վանքը վերանորոգվում ու բարեկարգվում է՝ դառնալով Ատրպատականի Հայոց առաջնորդարանը⁴⁸։ Ամենայն հավանականությամբ թագաժառանգ Աբաս Սիրզան մտադիր էր Ատրպատականում ստեղծել նոր հոգևոր կենտրոն հայության համար ի հակադրություն Էջմիածնի, որը դարձել էր Ռուսաստանի ուժեղ ազդեցությ-

յան ոլորտներից մեկը: Վերանորոգման ընթացքում, որին լայն օժանդակություն էր ցուցաբերում Ատրպատականի կառավարիչ թագաժառանգ Աբաս Սիրզան, վանքի կենտրոնական ու արևմտյան պատերի սև քարերը վախարհիմվում են սպիտակով, իսկ նրա գլխավոր մուտքի վերևում պարսկերեն նասթաալիղով արձանագրվում է թագաժառանգի կողմից կատարված այդ կարևոր գործի մասին: Պահպանվել են Աբաս Սիրզայի հրամանագրերը՝ հրապարակված Ս. Թադեի վանքի առնչությամբ, որոնք վկայում են թագաժառանգի կողմից ինչպես վանքին ցուցաբերած նյութական օժանդակության⁴⁹, այնպես էլ վանքի բաոորությունն ուղղված այլ միջոցառումների ու հատուկ հոգածության մասին⁵⁰:

Սույն հոդվածի շրջանակներում թարգմանաբար կներկայացվեն Մակվի Ս. Թադեի վանքի պատմությանը վերաբերող երեք անտիպ հրավարտակներ:

Մատենադարանի կաթողիկոսական դիվանի թղթապանակ 4-ի վավերագիր 118-ը Սեֆյան շահ Իսմայիլի 1516 թվականի հրովարտակն է՝ հրապարակված Մակվի Ս. Թադեի վանքի Ղարաքլիխայի մագրայեի ու նրա հակկաբեի նկատմամբ իրավունքների պաշտպանության նպատակով: Ի հաստատումն այս հրովարտակի էր հրապարակվել շահ Թահմասպի Ա-ի վերը նշված հրովարտակը, որն ընդգրկվել է Հ. Փափագյանի կազմած ժողովածուի մեջ որպես վավերագիր 16: Այն ամենայն հավանականությամբ Մատենադարանում ստացվել է Հ. Փափագյանի կազմած վերը նշված առաջին պրակի հրատարակությունից ավելի ուշ, քանզի հակառակ դեպքում այն անկասկած կընդգրկվեր ժողովածուի մեջ:

Կաթողիկոսական դիվանի, թղթ. 4, վավերագիր 119-ը Սեֆյան շահ Սեֆի Ա-ի 1633 թվականի հրովարտակն է, տրված ի հաստատումն Աբտազի վանքին տրված մախորդ շահերի (Իսմայիլ Ա, Թահմասպ Ա և Աբաս Ա⁵¹) վերոհիշյալ հրովարտակներով նշվող իրավունքների: Այս հրովարտակում նշվում է նրա հրապարակման համար Նոր Ջուղայի հայ մեծահարուստ վաճառականներ Խոջա Նազարի և Խոջա Սաֆրազի կողմից արված միջնորդության մասին, մի հանգամանք, որ մատնանշում է Սպահանի հայ ազդեցիկ անձանց կարևոր դերը հայոց վանքերի իրավունքների պաշտպանության գործում: Հարկ է նշել, որ վերոհիշյալ Խոջա Նազարի անունը նշվում է նաև շահ Սեֆիի 1629 և 1631 թվականների հրովարտակներում, որոնցից առաջինը հրապարակվել էր Էջմիածինը տարեկան 100 բուման փիշքեշի պարտավորությունից ազատելու⁵², իսկ երկրորդը՝ Դարաշամբի Ստեփանոս Նախավկայի վանքից զանձվող հարկերի և վանքի վանահայրությունը Պետրոս վարդապետին հանձնելու կապակցությամբ⁵³:

Մատենադարանի կաթողիկոսական դիվանի երկու հրովարտակներ տրված են Ս. Թադեի վանքին Նադիր (1735-1747թթ.) և Իբրահիմ շահերի (1748 - 1749թթ.) անուններից⁵⁴: Այս հրովարտակները հաստա-

տում են Ս. Թադեի վանքի ազատված լինելը հարկերից և հրահանգում տեղական իշխանություններին իրանա-թուրքական սահմանագծին տեղի ունեցող անհանգստությունների ժամանակ վանքի հոգևորականներին անհրաժեշտ օգնություն ցուցաբերել: Այս հրովարտակաները, որ հրապարակվել են առաջինը՝ 1743, իսկ երկրորդը՝ 1748 թվականներին, ունեն գրեթե նույն բովանդակությունը. այսինքն՝ Իբրահիմ շահի հրովարտակը հրապարակվել է ի հաստատումն Նադիր շահի հրովարտակի: Մական այս վավերագրերից առաջինը շահական հրովարտակի պատճենն է, իսկ երկրորդը՝ բնագիրը, որը մեզ է հասել ավելի լավ վիճակում, քան նախորդը: Այս պատճառով ստորև ներկայացնում ենք միայն շահ Իբրահիմի հրովարտակը:

Թարգմանություն

Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 4, վավերագիր 118
բնագիր, մեծ. 19 x 42սմ, գիր՝ շիքասքես - դիվանի

Հանուն ռոքրմաձ և գթառատ Ալլահի

Ո՛վ Մեհամմադ, ո՛վ Ալի

Հաղթական Իսմայիլ Բահադուր,

Սեր խոսքը.

[Շահ Իսմայիլ Ա-ի կնիքը]

Օրերս Կարապետ վանահայրը տեղեկացրեց, որ Արքավինի⁵⁵ ռայաթները⁵⁶ հողագործությամբ են զբաղվում Ղարաքիլիսայի մագրայեում, որը իրենց օրինական մուքն⁵⁷ է, բայց բահրաչե⁵⁸ չեն վճարում: Ուստի կարգադրվեց, որպեսզի շար'ին համապատասխան օրինական բահրաչեն ... վճարեն խնդրարկուին: Նմանապես տեղեկացրեց, որ որպես Ղարաքիլիսա մագրայեի հակկաբե Արքավինի գետից նրան հատկացված է եղել վեց մասից երեքը: Մինչդեռ այժմ Արքավինի հողագործները շար'ին ու ընդունված կարգին հակառակ խանգարում են հնուց հաստատված ձևով հակկաբեի տնօրինմանը:

Ուստի կարգադրվեց, որպեսզի ըստ շար'ի հին կարգով նշված մագրայեի հակկաբեն հատկացվի և ըմբոստություն ու հակառակություն տեղի չունենա: Մակվի ու Չալդրանի⁵⁹ դագինները⁶⁰ պարտավոր են այս կապակցությամբ շար'ին համապատասխան գործադրել և ոչ մեկին ըմբոստանալու հնարավորություն չտալ: Թող այս ընդունեն որպես խիստ կարգադրություն և շար'ի էությանբ առաջնորդվեն:

Գրվեց 922 թվականի զի դաադի ամսի 9-ին⁶¹:

Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, քոթ. 4, վավերագիր 119,
բնագիր, մեծ. 18 x 40սմ, գիր՝ նասթաւալիղ - շիքասքե

Իշխանությունն Ալլահինն է:

Շահ Իսմայիլը, թող արժանանա մա [աստծո] ողորմածությանը
Իմ մեծ պապ շահ Թահմասպը, թող հողը նրա վրա թեթև լինի
Իմ հայր շահը, թող Ալլահը նրա հոգին լուսավորի
[Շահ Սեֆի Ա-ի կնիքը]

Արքայական հրաման եղավ հետևյալի մասին.

Ինչպես քրիստոնյա մեծատոմնեղից լավագույն [Նոր] Ջուղայի
Խոջա Նազարն ու Սաֆրազը տեղեկացրեցին, Ղարաքիլիսա մուգրային,
որի սահմաններն են Անգուրակի լեռնանցքը, Ղրիսբուլաղը⁶² և Հունաքի
գերեզման[ոց]ը, որպես մուլք իրենց [վանքին] է պատկանում: [Նրանք]
ներկայացրեցին դրախտաբնակ աշխարհակաղ Նորին Մեծության պար-
տադիր գործադրության ենթակա փարվանչե⁶³, որ հրապարակվել էր ի
հաստատումն իր նախնիներ նախկին քազավորների հրովարտակների:
Ըստ նրա՝ Արքավին գյուղի գետից նշված մագրայեի հակկաբեն հաս-
տատված է վեցից երեք մաս[ի չափով]: Եվ [նրանք] խնդրեցին Նորին
արքայական Մեծության ստորագրությունը: Ուստի կարգադրեցինք, որ-
պեսզի այնպես, ինչպես, որ հին ժամանակներից մինչ այժմ հաստատ-
ված ու ընդունված է եղել, մույն կարգով որոշված համարեն. Արքավին և
այլ գյուղերի ռայաթներից ոչ մեկը ապօրինաբար նշված մագրայեի հո-
դային մուլքերը մուտք չպետք է գործի, նրանց հատկացված հակկաբեի
նկատմամբ հավակնություններ ունենա և հին կարգուկանոնը խախտի:
Քանի որ աշխարհակալ միապետի հրամանագրում նշված է, որ հմուց ի
վիր Ղարիզ, Մահլազան և Ղորուղ գյուղերի չրաղլըղ պատկանել է Ղա-
րաքիլիսային, ուստի թող Ղարաշամբի ռայաթներն ու քեղխուդաները⁶⁴
ոտմնագրություններ չկատարեն և հին օրենքն ու կարգը չխախտեն: Այս-
պիսով անհրաժեշտ է, որպեսզի մույն օրենքին համապատասխան վար-
վեն, նրանց ունեցած և այս կապակցությամբ հրապարակված դրախ-
տաբնակ Ջամշիդի փառքին արժանի Նորին Մեծություն շահի ու երկնա-
յին դրախտում բնակվող բարեբախտ տիրակալի մինչ այժմ գործող
հրամանագրի բովանդակությամբ հակառակ չվարվեն: Խոյի և Մակվի
օլթայի⁶⁵ հաքիմներն⁶⁶ ու քիուղարները⁶⁷ թող գրվածին համապատաս-
խան կարգադրված համարեն և նախկին հրամանագրերի բովանդա-
կությունն ու հին կարգը զանց չառնեն: Եվ այս թող ընդունն որպես
խիստ կարգադրություն, նրան չհակառակվեն և ամեն տարի մոր հրա-
մանագիր չպահանջեն:

Գրվեց 1042 թվականի ռաջաբ ամսին⁶⁸:

Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 4, վավերագիր 131
բնագիր, մեծ. 27.7 x 44սմ, գիր՝ մասթաալիլ – շիքասքե
[Իբրահիմ շահի կնիքը]
Չկա Աստված բացի Ալլահից
Նրանն է իշխանությունն ու գորությունը

Արքայական հրաման եղավ հետևյալի մասին.

Քրիստոնյա քահանաներից ու վանականներից լավագույն Ղա-
րաքլիխայի Սինաս⁶⁹ խալիֆայի⁷⁰ հանդեպ ունեցած շահական ողորմա-
ծությամբ ու անսահման զթասրտությամբ [հաշվի առնելով] նրա մվիր-
վածությունն ու ծառայությունները, նաև այն, որ ըստ հանգուցյալ մեծ
հորեղբոր, թող հողը նրա վրա թեթև լինի, և Իրանի ու Ռումի (Օսմանյան
թուրքիա) դրախտաբնակ միսպետների ռադամների⁷¹ բովանդակությ-
յան, Ղարաքլիխա գյուղը եղել է հիշյալ վանքի վակֆը, իսկ գյուղի բնա-
կիչները, լինելով նրա սալասսվորները, մուաֆ են եղել դիվանի մութա-
վաջջեհաթից⁷², Մեր արքայական Մեծությունը նույնպես կարգադրե-
ցինք նրանց դիվանի⁷³ պարտավորություններից, ինչպիսիք են ջիզյան⁷⁴,
այլ մութավաջջեհաթն ու սադեռաթը⁷⁵. ավարիզաթը⁷⁶, չորամբեկին⁷⁷ և
այլն, մուաֆ ու մուսալլամ⁷⁸ ճանաչել, որպեսզի իրենց հարկերը հիշյալ
մուլքերի եկամուտների հետ ծախսեն նշված վանքի ու նրա բնակիչների
վրա: Բացի հիշյալ գյուղից, որտեղ էլ, որ այդ վանքի վակֆային մուլքերը
գտնվելիս լինեն, նույն կարգով մուաֆ ու մուսալլամ հայտարարեցինք:
Երևանի ամիրները⁷⁹ թող հիշյալ գյուղի ու նշված վանքի այլ վակֆային
մուլքերի հարկերը իրենց արվար-ե ջամից⁸⁰ հանեն և ոչ մի դիմար չպա-
հանջեն: Սուրհանդակները, ճանապարհների հսկողներն ու հարկահա-
վաքները թող վանքի առևտրական կամ այլ գործերով տարբեր կողմերը
գնացող-եկող սևագութներին ճանապարհին ու վիլայեթներում⁸¹ չնեղեն:
Քանի որ հիշյալ գյուղը գտնվում է Ռումի ու Քրդստանի սահմանագծի
վրա, և հաճախ ավազակներն ու ավարառուները ռսնծություններով
մեղում են նրանց, ուստի Երևանի, Խոյի ու Դումբուլի հաքիմները թող
նրանց ներխուժման ժամանակ [վանքին] անհրաժեշտ օգնություն ցու-
ցաբերեն: Վիլայեթների հաքիմները պետք է թույլ տան, որպեսզի նրանք
միմյանց հետ ըստ իրենց սովորության ու կարգի վարվեն և այս կապակ-
ցությամբ նրանց չնեղեն: Գնացող-եկողներից թող առանց դատական
հիմքի դիմար ու հացահատիկ չպահանջեն ու չանհանգստացնեն: Որ-
տեղ էլ, որ այդ գյուղից ցրվածները լինեն, ոչ ոք չպետք է նրանց ետ քե-
րելուն խոչընդոտի, այլ պետք է գաղթեցնի նրանց հին բնակավայրը, որ-
պեսզի [այնտեղ] բնակվեն և հանգիստ զբաղվեն հավիտենական պե-
տության հարատևման համար աղոթելով: Այս թող ընդունեն որպես
խիստ կարգադրություն և այն իրենց պարտականությունը համարեն:

Գրվեց 1161 թվականի սրբազան մուհարամ ամսին⁸²:

بسم الله الرحمن الرحيم


یا محمدیا علی

الحکم الله

ابو المظفر اسمعيل بهادر سيوزوم بن

[مهر]

درین وقت فراید درحاسیای معروض داشت که رعایا ارکوبن زراعت در
مزرعة قراکلیسیاه که ملک شرعی متصرف فیة اوست مینمایند و بهره
شرعیه بدو نمیرسانند بنابراین مقرر شد که حسب تشیع بهره شرعی ...
براف رساند و همچنین نمود که حقابه مزرعة قراکلیسیا از رودخانه
ارکوبن از شش سهم سه سهم یار مقرر بوده و اکنون مزارعان ارکوبن
بخلاف شرع و دستور معهود مزاحم حقابه قدیم مستمره اینجا میشوند که
بنابرین مقرر شد که بوجه شرع بدستور قدیم حقابه مزرعة مذکور را
رسانند و تمرد و تخلف نورزند بعهده قضات ماکویه و حدود چالدران که
درین باب ابراد شرعی نموده و مجال تمرد احدی ندهند و قدغن دانند و
محضر شرع را قدوة دانند.
تصدیر فی ۹ شهر ذی حده سنة ۹۲۲.




شاه اسماعیل علیه الرحمة الغفران
چند پررگوارم شاه اسماعیل طاب تراه
شاه پایالم انارالله برهانه

[مهر]

فرمان معاینوں شد آنکه چون زیاده الصواب المسیحیه خواجه نظرو
سرافراز جولاهی بعض رسائیدند که مزرعه قراکلیسیا محدود محدود
کدوک انکورک و قرخ بونخ و مقبره هتاک از راه ملکیت تعلق بایشان دارد و
پروانچه مطاعه نواب گیتیستان فردوس مکان که بامضای فرمانیه سال ۱۰۴۱
اجداد ماضیه معاینوں که صادر گشته اپراژ نمودند مستعمل برانکه که ایه
مزرعه مذکور از رودخانه قریه ارکوبن از شش سهم سه سهم مقرر است و
اسمهای امضاء نواب هه ایون کردند بنابرین مقرر فرمودیم که بدستوری
که از قدیم الایام الی الآن مقرر و معمول بوده بهماندستور مقرر دانسته
احدی از رعایا، قریه ارکوبن و غیر ذلک مطلقاً بغیرحق و خلاف حساب در
املاک اراضی محدوده مزرعه مذکور مدخل نساخته پیرامون حقابه مقرر
ایشان نگردند و از دستور سابق و قاعده قدیم تجاوز ننمایند و چون در حکم
نواب گیتیستانی قید است که از قدیم چرانعلق قریه فریز و مهنرن و قروق
تعلق بقراکلیسیا داشته اند ایان و رعایا دره شاملق دران مدخل نساخته از
قاعده قدیم و دستور سابق تجاوز ننمایند بنابرین می باید که بهمانقاعده
عالموانه از مضمون حکم اعلیحضرت شاه چمچاه چشت مکانی و حاقان
صاحبقران عالیون اشیانی که درین ایوب عز صدور یافته در دست داشته
باشد و الی غایه معمول بوده باشد تجاوز ننمایند حکام و تیولداران الکاه
خوی و مانحو حسن المستظور مقرر دانسته از مضامین احکام ماضیه و
استور قدیم در نگردند و درین باب قلعن دانسته از فرموده تخلف نورزند و
هر ساله حکم مجدداً نمایند
تحریر فی شهر رجب سنه ۱۰۴۲

فرمان همايون شد آنکه بنابر شقعه شاهانه و مرحمت بیغایت خسروانه در باره زبده القیسیین و الزهیانین مناس خلیفه قراکلیسیا و حسن اخلاص و خدمتگذاری او و نظر بمضامین ارقام نواب غفران مآب عم بزرگوارم طاب ثراه و سلاطین جنت مکین روم و ایران قریه قراکلیسیا وقف کلیسیائی مزبور و سکنه قریه مذکور، یست، اینکه خدمه آنجا می باشند از متوجهات دیوانی معاف می بوده اند نواب همايون ما نیز بدستور ایشان را از نکالیف دیوانی از قبیل جزیه و سایر متوجهات و صادرات و عووضات و چوپانیگی و غیره معاف و مسام فرمودیم که متوجهات خود را با منافع املاک مزبور صرة کلیسیا مذکور و ساکنین آن نمایند، و سواى قریه مزبور هر جا که املاک، وقفی کلیسیائی مزبور بوده باشند بهمان دستور معاف و مسام فرمودیم عمال ایروان متوجهات قریه مزبور و سایر املاک وقفی کلیسیائی مذکور را از ابوابجمعی خود وضع نعوذه دیناری مطالبه نمایند و چنانچه از سیاه کلاهان کلیسیائی مزبور بجهه داد و ستد و سایر امور باطراف و جواب آمد و شد نمایند چاپاران و مستحفظین و راهداران سوارع عرض راه و ولایات متعرض آنها نشوند و چون قریه مزبور در سرحد روم و کردستانات و قم و اکثر اوقات اوباش و قطاعان طریق دست انداز بآنها کرده مزاحمت میرسانند حکام ایروان و حوی و دنیلی در حین ورود آنها امداد و اعانت لازمه بعمل آورند و حکام ولایات گذارند که آنها برویه و دستور خود با یکدیگر ... اوک. کرده درینخصوص ستعرض ایشان نشوند و مترددین بدون جهه دیوانی دیناری و حبه از ایشان مطالبه نکرده مزاحمت ترسانند و در هر جا که از متفرقه قریه مزبور بوده باشد احدی در باب خرجانیدن مزاحمت آنها نکرده خرجانیده روانه مکان اصلی خود نمایند که در مخان قدیم خود سکنی و مرفه الحال بدعای دولت ابد مدت اشتغال نمایند. دریه مواد از جواب قدغن قزم دانسته و در همه شتاسند.

تحریراً فی شهر محرم الحرام سنه ۱۱۶۱



THE PERSIAN DOCUMENTS ON THE MONASTERY
OF ST. THADDEUS IN MAKU

The article contains a short review of the present state of the study of Persian historical documents referring to the history of the monastery of St. Thaddeus the Apostle. The information of the Armenian and Persian historical documents represented by the author in the article, state of the belonging of the Mazrayehs of Qarakilisa, Yomridash, Dibak and Reyhanlu Villages in XVII-XVIII centuries to the monastery of St. Thaddeus, also of the existence of some land and other estates of the monastery in other villages and towns of Azerbaijan in Iran. The existence of some estates in Varaknakert and Nushik, now non-existent Armenian villages of Azerbaijan in Iran is evident from the content of several deeds of purchase. The right of the monastery to have the chiraqliq tax from the villages of Qorug, Mahlazan and Krcets, confirmed by some royal decrees was often disputed by the monastery of St. Stepannos Nakhavka and granted to this monastery. The right of having the state taxes of Qaratulki Village was granted to the monastery in 1814 by the decree of crown prince Abbas Mirza and later, in XIX century, confirmed for several times by the decrees of other rules.

Author presents three unpublished Persian decrees referring to the history of the monastery issued by Safavid shahs Ismayil I in 1516 and Safi I in 1633, shah Ibrahim in 1748 with their Persian texts, Armenian translations and necessary commentaries in the article.

ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հ. Ոսկյան, Վասպուրական- Վանի վանքերը, Վիեննա, 1942, էջ 457-500; Kleiss W., Das Kloster des Heiligen Thaddäus in Iranisch Aserbaidjan, Sonderdruck aus Istanbul Mitteilungen, Tübingen, 1967 և այլն:
2. Das Armenische Thaddäuskloster in Der Provinz West Azerbaidjan in Iran, (Diploma Ingenieur Armen Haghazarian, Aachen, 1973:
3. Հ. Դ. Փափազյան, Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, պրակ I, Երևան, 1956 Վավ. 7, 16:
4. Մ. Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 244, վավ. 254:
5. Մ. Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 243, վավ. 8:
6. Խոսքն ամենայն հավանականությամբ հայոց կաթողիկոսների կոնդակներում ժամանակ առ ժամանակ Ս. Ստեփանոս Նախավկայի վանքի թեմի ու վիճակի մեջ հիշատակվող «Դորուխ, Մախլազան և Կրեցերց» գյուղերի մասին է (Հ. Ոսկյան, շվ. աշխ., մաս Բ, էջ 607, 639):
7. Չըրադլըղ - «Բառացի» «լուսավորության համար», եկեղեցիների համար զանգվող մոմի դրամ» (Հ. Փափազյան, նշվ. աշխ., պրակ I, էջ 118):
8. Հ. Փափազյան, նշվ. աշխ., պրակ I, էջ 62:
9. Հ. Փափազյան, նշվ. աշխ., պրակ I, էջ 62, 93:

10. ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 4, վավ. 119; Հ. Դ. Փափագյան, նշվ. աշխ., պրակ I, վավ. 16; Das Armenische Thaddäuskloster in Der Provinz West Azerbaidjan in Iran, doc. 11:
11. Տե՛ս Մելքիսեդեկ Գառնեցի կաթողիկոսի (1593-1599, 1600-1624), Ալեքսանդր Ա Ջուղայեցի կաթողիկոսի 1712թ. կոնդակները (Հ. Ոսկյան, նշվ. աշխ., էջ 607, 639); նաև այլ կոնդակներ՝ ՄՄ, թղթ. 244, վավ. 248, 254, 260 և այլն; նաև շահ Մուլթան Հուսեյնի 1696թ. հրովարտակը (Զ. Կոստոկյան, Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, պրակ III, վավ. 58, էջ 136):
12. Աղբյուրներում Մզրա՝ անվամբ բնակավայրի մասին որևէ հիշատակության չենք հանդիպել: Ամենայն հավանականությամբ սա մազրայե բառի աղվադված ձևն է, որը հանդիսանալով հացահատիկի հողը կամ մայր գյուղին պատկանող գյուղակը նշվում է Ս. Թադեիմ պատկանող մյուս գյուղերի հետ, ինչպես օրինակ Ղարաքիլիսայի մազրայե, Յոմրիդաշի մազրայեն և այլն:
13. Յոմրուդաշը կամ Յոմրիդաշը Մակվի նահանգի (շահերսթան) Սիյահ Չեշմե գավառի (րախշ) Բաբաջիքի շրջանի (դեհեսթան) գյուղերից է, որ գտնվում է Սիյահ Չեշմեից 26կմ դեպի հյուսիս արևելք (۵۶۴ م. ۱۳۳۰. استان آذربایجان. جلد ۴, فرهنگ جغرافیائی ایران):
14. Ղարաքիլիսա գյուղը Ս. Թադեի վանքին կից գտնվող գյուղն է, որը ներկայումս մտնում է Մակվի նահանգի Սիյահ Չեշմե գավառի Գալդրանի շրջանի մեջ, Սիյահ Չեշմեից 15 կմ դեպի հյուսիս-արևելք (۳۶۶ م. ۱۳۳۰. (فرهنگ جغرافیائی ایران. جلد ۴, استان آذربایجان):
15. Ամենայն հավանականությամբ խոսքը XX դարում Մակվի նահանգի Սիյահ Չեշմե գավառի Գալդրանի շրջանի մեջ մտնող Դիպակ (دیپک) բնակավայրի մասին է, որը գտնվում է Սիյահ Չեշմեից 20 կմ դեպի հյուսիս արևելք (۲۲۷ م. ۱۳۳۰. (فرهنگ جغرافیائی ایران. جلد ۴, استان آذربایجان):
16. Աղբյուրաղ - գյուղ Մակվա խանությունում: Գտնվում է Մակու քաղաքից 46 կմ հարավ, Կոտուրի ավազանի մի առվակի ափին, բարձրադիր ու գեղատեսիլ վայրում (Հայաստանի և հարակից շրջանների բառարան, հ. 1, Երևան, 1986, էջ 166):
17. XX դարում այս գյուղը նշվում է Մակվի նահանգի Սիյահ Չեշմե գավառի Բաբաջիքի գյուղերի փում, Սիյահ Չեշմեից 20 կմ դեպի արևելք (۳۶۰ م. ۱۳۳۰. (فرهنگ جغرافیائی ایران. جلد ۴, استان آذربایجان):
18. Սոմաբուլաղ (կամ Սոմաբուլաղ - صومایلاخ) բնակավայրը XX դարում նշվում է Մակվի Սիյահ Չեշմե գավառի Բաբաջիքի շրջանի վարչական տարածքում՝ Սիյահ Չեշմեից 22.5 կմ դեպի հարավ-արևելք (۳۲۱ م. ۱۳۳۰. (فرهنگ جغرافیائی ایران. جلد ۴, استان آذربایجان):
19. Աղդաշ, գյուղ Մակվա խանությունում: Գտնվում է Մակու քաղաքից 33 - 34կմ հարավ-արևելք, Զանգիմարի ավազանի մի գետակի ափին, մեղ հովտում (Հայաստանի և հարակից շրջանների բառարան, հ. 1, էջ 170):
20. Մահլազան - գյուղ Իրանի Ատրպատականի Խոյ գավառում, Մակուի գավառի սահմանի մոտ: Անցյալում եղել է մեծ ավան: Հիշատակված է «Ցուցակ ձեռագրագ»-ում (էջ 189): 1890-ական թթ. ուներ 20-30 տուն հայ

քնակիչ, XVII դարի մի կիստվեր եկեղեցի և հին գերեզմանատուն: Այստեղի հայ քնակչությունը 1828-29թթ. գաղթել է Նախիջևանի գավառը և այժմյան ՀՍՍՀ Սիսիանի շրջանի Սալվարդ գավառը (Հայաստանի և հարակից շրջանների բառարան, հ. 3, էջ 653):

21. Դորոտլ – Մակվի խանությունում, Ս. Թադիի վանքից մոտ 15 կմ հեռավորությամբ (Հայաստանի և հարակից շրջանների բառարան, հ. 3, էջ 578):
22. Խոսքն ամենայն հավանականությամբ Գոհարան (կամ Կոհրովան) գյուղի մասին է, որը XX դարում նշվում է Խոյի մահանգի էյվողլի գավառում, Խոյից 5.5 կմ դեպի հյուսիս-արևելք (جغرافیائی ایران، جلد ۴، استان آذربایجان، ۱۳۳۰ ص ۴۶۹ فرهنگ): Պահպանվել է մահ մի կալվածագիր, ըստ որի 1741 թ. Ս. Թադիի վանքը գնել է մեկ կտոր այգի Գոհարան գյուղում (ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 4, վավ. 40):
23. Չորս - Ավան, գյուղաքաղաք, քերդական Իրանի Ատրպատական մահանգում, Խոյի գավառում, Չորս գավառակի կենտրոնը, Խոյ քաղաքից 37 կմ հյուսիս: XIX դարի սկզբներին ուներ 200 տուն պարսիկ և հայ քնակիչ (Հայաստանի և հարակից շրջանների բառարան, հ. 4, Երևան, 1998, էջ 271):
24. XX դարում Ռեյհանլու անվամբ քնակավայր է նշվում Մակվի մահանգի Սիյահ Չեշմե գավառի Չալդրանի շրջանում, Սիյահ Չեշմեից 9 կմ դեպի հյուսիս արևելք (جغرافیائی ایران، جلد ۴، استان آذربایجان، ۱۳۳۰ ص ۲۴۹ فرهنگ):
25. Ֆրանգեան, Ատրպատական, Թիֆլիս, 1905, էջ 30 - 31:
26. Հակկարե - «Այսպես էր կոչվում ջրի այն բաժինը, որ հատկացվում էր տվյալ հողամասի, համրի, այգու և, առհասարակ, որևէ մշակելի տարածության ոռոգման համար» (Հ. Փափազյան, Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, պրակ I, էջ 111):
27. ՄՄ, կաթողիկոսական դիվան, թղթ. 242, վավ. 138, 139, 145: Ժամանակագրություն, ՄՄ, ձեռ. 8233, էջ 259:
28. Վակֆ - وقف - Բառացի նշանակում է «կանգ առնել», «ամրանալ»: Այսպես էին կոչվում եկեղեցիներին կամ մզկիթներին նվիրված՝ վակֆ արված հողերն ու այլ ստացվածքները, որովհետև, նվիրվելով որևէ կրոնական հաստատության, դրանք այլևս ենթակա չէին ոչ մի կարգի օտարման և մնում էին որպես եկեղեցու կամ մզկիթի մշտական սեփականություն և որպես այդպիսիք ազատվում էին պետական հարկերից (Հ. Փափազյան, նշվ. աշխ., պրակ I, էջ 120):
29. Մ. Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ ՄՄ), Կաթողիկոսական դիվան, թղթ. 4, վավ. 120, 121:
30. Դանգ - دانگ - Կալվածատիրական՝ մուլքային գյուղերից ստացվող ամբողջ եկամուտը կամ ռենտան, որ սովորաբար կոչվում էր «մուլք», դիտվում էր որպես մի ամբողջություն և, ծանրությամբ մանր միավոր «միսղալ»-ի մեծ քաժանվում էր 6 դանգի: Գյուղերի մուլքերը առուծախի էին ենթարկվում ինչպես ամբողջությամբ, որ կոչվում էր «շեշդանգ» (شیش دانگ) (վեց դանգ), այնպես մահ մի քանի, երբեմն էլ մեկ, կես կամ քառորդ դանգով, որ անվանվում էր «թասուջ» (Հ. Փափազյան, նշվ. աշխ., պրակ II, Երևան, 1959, էջ 213):

31. ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 4, վավ. 127:
32. Շար' - شرع - Մուսուլմանական գլխավոր, կրոնական, հոգևոր օրենսդրական-դատական խորհուրդ, որին մասնակցում էին տվյալ վայրի բարձրաստիճան հոգևորականները (Հ. Փափագյան, ճշվ. աշխ., պրակ I, էջ 117):
33. ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 4, վավ. 125:
34. ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 242, վավ. 139, 143:
35. Մազրայե - مزعه - հացահատիկի հող, գյուղակ, որ պատկանում է մայր գյուղին:
36. ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 4, վավ. 134:
37. ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 242, վավ. 139:
38. Կաթողիկոսական դիվան, թղթ. 1բ, վավ. 189:
39. ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 242, վավ. 144:
40. ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 242, վավ. 161:
41. ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 4, վավ. 129:
42. ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 4, վավ. 40, թղթ. 242, վավ. 159:
43. Կամ այնպիսի հայերեն կալվածագրեր, որոնցում ճշված չէ կալվածքի գտնվելու վայրը, այլ ճշվում է միայն նվիրատուի անունն ու կալվածքի բնույթը. հողային տարածք, տուն կամ այլ անշարժ գույք (տե՛ս ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 242, վավ. 140, 150, 155, 172):
44. ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 50, վավ. 492ա, էջ 1:
45. ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 50, վավ. 492ա, էջ 2:
46. ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 4, վավ. 138:
47. ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 4, վավ. 139, 140, 149; նաև՝ Das Armenische Thaddäuskloster in Der Provinz West Azerbaidjan in Iran, doc. 14:
48. Ֆրանգեան, ճշվ. աշխ., էջ 30:
49. ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 4, վավ. 137:
50. ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 4, վավ. 135, 136, 143:
51. Շահ Աբաս Ա-ի անունից 1611թ. հրապարակվել է հրովարտակ, որը վերահաստատում է Ղարաքիլիսա մազրայեի վանքի կալվածք լինելը, նաև Ղարիզ, Մահլազան, ու Ղորուղ գյուղերի չորաղլղի պատկանելությունը Ս. Թադեի վանքին և արգելում է Դարաշամրի Մաղարդա վանքի հոգևորականների ոտնձգությունները դրա նկատմամբ (Das Armenische Thaddäuskloster in Der Provinz West Azerbaidjan in Iran, Doc. 11, հղում՝ «Հուր» ամսագիր, տետր 3-4, 1971):
52. Հ. Դ. Փափագյան, ճշվ. աշխ., պրակ 1, վավ. 19:
53. Նույն տեղում, վավ. 20:
54. ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 4, վավ. 41, 131:
55. Արքավում կամ Արքավին (ارکون) անունով մի գյուղ ներկայումս ճշվում է Մակվի մարզի (شهرستان) Սիյահ Չեշմեի գավառի (بخش) գյուղերի թվում, Սիյահ Չեշմեից 19 կմ դեպի հարավ-արևելք (ص ۸۳۳, ۱۵ حلد ۴ استان آذربایجان, (فرهنگ جغرافیائی ایران):
56. Ռայաթ - رعیت - Սկզբնաղբյուրներում գործ է ածվում հպատակ և հարկատու ժողովրդի, հատկապես նստակյաց, հողագործ գյուղացիության իմաստով:

- Իսկ խաշնարած քոչվորությունը կոչվում էր «իլլաթ - ايلات» և ավելի արտոնյալ վիճակում էր գտնվում (Հ. Դ. Փափագյան, նշվ. աշխ., պրակ 1, էջ 118):
57. Մուլք - ملك - սեփականություն, տիրույթ, ժառանգաբար ստացած կամ դրամով գնած ու սեփականություն դարձրած հող կամ այլ անշարժ կալված (Հ. Դ. Փափագյան, նշվ. աշխ., պրակ 1, էջ 115):
58. Բահրեջե - بهرهجه - Այսպես էր կոչվում հողագործ գյուղացիության կողմից կալվածատիրոջն ու պետությանը վճարվող հողային ռենտան, որի պետությանը հատուցվող մասը կոչվում էր «բահիրաջե-ի դիվանի» (ديوانی بهرهجه), իսկ կալվածատիրոջը հատուցվողը՝ «բահիրեջե-ե մալիքանե» (مالکات بهرهجه) (Հ. Դ. Փափագյան, նշվ. աշխ., պրակ 1, էջ 106):
59. Չալդրան - Վայր («շրջան») պատմական Ատրպատականում, Արաքս գետի աջակողմյան Բալըկ վտակի հովտում (Հայաստանի և հարակից շրջանների քառարան, հ. 4). որտեղ 1514թ. տեղի ունեցած վճռական ճակատամարտում Սեֆյան Իրանը պարտություն է կրում Օսմանյան գորքերից: Չալդրանը XX դարում Մակվի մարզի Սիյահ Չեշմե գավառի գյուղական շրջաններից մեկն էր, որին հյուսիսից սահմանակից էր Ղալադարասին, հարավից՝ Ավաջիկը, արևելքից՝ Մոքմանաբադը և արևմուտքից՝ Բաբաջիքը (۱۳۳۰, ص ۱۵۴):
آذربایجان، جغرافیائی ایران، جلد ۴، استان:
60. Ղազի - قاضی - Ղատավոր, շար'ի դատական ատյանի պետը, որը նշանակվում էր բարձրաստիճան հոգևորականության շաքերից, որը շարիաթի օրենքով քննում էր քաղաքացիական ու քրեական գործերը (Հ. Դ. Փափագյան, նշվ. աշխ., պրակ II, էջ 222):
61. 1516թ. դեկտեմբերի 5-ը:
62. Ղրխքուլադը ներկայումս մտնում է Մակվի մարզի Սիյահ Չեշմե գավառի Չալդրանի շրջանի մեջ: Գտնվում է 17.5 կմ Սիյահ Չեշմեից դեպի հարավ արևելք (۱۳۳۰, ص ۲۵۲):
آستان آذربایجان، جلد ۴، استان ایران، جلد ۵، جغرافیائی ایران، ص ۲۵۲:
- Ֆրանգյանի այս գյուղը «շինսսծ է Շաարշանի աւերակների վրա», որտեղ մինչև XIX վերջերը հայեր էին բնակվում (Ե. Ֆրանգեան, նշվ. աշխ., էջ 23):
63. Փարվանջե - پروانجه - Պաշտոնական գրություն, հրամանագիր, հրովարտակ (Հ. Դ. Փափագյան, նշվ. աշխ., պրակ 1, էջ 122):
64. Բյադխուդա - بدخدا - Այսպես էին կոչվում գյուղական ավագները: Մակայն չպետք է հասկանալ միայն գյուղի «գեղջավազ»-ի, «տանուտերի» կամ «ռեսի» իմաստով. մի գյուղում կարող էին լինել մի քանի քյադխուդաներ, դրանք փաստորեն գյուղի ավագների կամ «աղախկալների» (պարսկ. - «ռիշեսֆիդ») խորհրդի անդամներն էին, որոնք այդ անունը ստացել էին երբեքն գյուղի տանուտեր եղած ժամանակ: Այդ պաշտոնից ազատվելուց հետո էլ նրանք շարունակում էին կոչվել քյադխուդաներ ու մասնակցում էին ավագների խորհրդին (Հ. Դ. Փափագյան, նշվ. աշխ., պրակ I, էջ 122):
65. Օլթա - كا - Հողային այնպիսի տիրույթներ, որոնք որպես ավատ տրվում էին քոչվոր ցեղերի պարագլուխներին և բարձրաստիճան զինվորականությանը՝ ամիրներին: Օլթա ստացող ամիրները պարտավոր էին պահանջված դեպքում որոշյալ քանակությամբ զորք տրամադրել կենտրոնական իշխանությանը: Օլթայի ամիրները իրավունք ունեին

առանձին դրոշակ ունենալ և հանդիսավոր երթերի ու գորաշարժերի ժամանակ հատուկ թմբուկներով թմբկահարել (Հ. Դ. Փափագյան, նշվ. աշխ., պրակ I, էջ 123):

66. Հաքիմ - حاكم - Գավառապետ, քաղաքացիական դատավոր (Հ. Դ. Փափագյան, նշվ. աշխ., պրակ I, էջ 111):
67. Թիուղար - تيوغار - Այսպես էին կոչվում այն բարձրաստիճան զինվորականները, պետական պաշտոնյաներն ու ամիրները, որոնք ոռճիկի դիմաց ստանում էին շրջանից, գյուղերից կամ առանձին գյուղից գանձվող ամբողջ պետական հարկերի կամ նրանց մի մասի գանձման իրավունքը, որպես «թիուլ»: Խոշոր թիուղարներն իրենց տրված օրյեկտների բնակչության նկատմամբ, թիուղարության ժամանակաշրջանում հաճախ ունենում էին նաև վարչական ու դատական իրավունք (Հ. Դ. Փափագյան, նշվ. աշխ., պրակ I, էջ 109):
68. 1633 թվականի հունվարի 12 - փետրվարի 11:
69. Մինաս վարդապետը Արտազի վանքի եպիսկոպոս էր օրինվել Էջմիածնում 1741թ. ապրիլին (Ժամանակագրություն, ՄՄ, ձեռ. 8233, էջ 78թ): Ամենայն հավանականությամբ այս Մինաս վարդապետին է վերաբերում Ս. Թադևոս Առաքյալի տապանաքարերից հետևյալի գրությունը. «Տապանս սա է եղևելի Մինաս ամուն վարդապետի, որ յաջորդեսց տանս Մեծին Ներգրաղմանց ժամանակի. ծառայ էր սա տեառն Մեծի Ջաքարիա վարդապետի ՌՄ» (1751) (Das Armenische Thaddäusklöster in Der Provinz West Azerbaidjan in Iran, p. 198)):
70. Խալիֆա - خليفة - Իրանում XVI - XIX դարերում խալիֆա էին անվանում հայոց կաթողիկոսներին, համարելով նրանց քրիստոնյաների մարգարեի՝ Քրիստոսի հաջորդը: Այդ տիտղոսով մեծարվում էին նաև թեմական առաջնորդները և նույնիսկ վանքերի վանահայրերը (Հ. Դ. Փափագյան, նշվ. աշխ., պրակ II, էջ 220):
71. Ռաղամ - رقم - Պաշտոնական գրություն, թագավորական հրովարտակ (Հ. Դ. Փափագյան, նշվ. աշխ., պրակ I, էջ 119):
72. Մութավաջջեհաթ - متوجهاث - կամ վջուհաթ - وجوهاث - «վաջի - وچه»: Այս անվան տակ հասկացվում էին առհասարակ այն բոլոր հարկերը, որոնք գանձվում էին կանխիկ դրամով: Աղբյուրներում հանդիպում է նաև «թավաջջուհաթ - توجهات» ձևով (Հ. Դ. Փափագյան, նշվ. աշխ., պրակ I, էջ 121):
73. Դիվան - ديوان - Պետական գործերի առյան կամ գրասենյակ: Հասկացվում էր հատկապես պետության կամ նրա բարձրագույն օրգանի իմաստով (Հ. Դ. Փափագյան, նշվ. աշխ., պրակ I, էջ 108):
74. Ջիզլա - حزه - Ոչ մուսուլման ռայաթներից (քրիստոնյաներ և հրեաներ) գանձվող գլխահարկ, որ կանխիկ դրամով գանձվում էր յուրաքանչյուր չափահաս շահաւորման տղամարդուց: Յուրաքանչյուր գյուղից գանձվող Ջիզլան հաշվված էր և ընդհանուր գումարով հարկային մատչաններում գրանցված՝ տվյալ գյուղական համայնքի անունով (Հ. Դ. Փափագյան, նշվ. աշխ., պրակ I, էջ 118):
75. Մադիբաթ - صادات - արտակարգ հարկեր:

76. Ավարիզաթ - عوارضات - Այս տերմինի տակ հասկացվում էր ռայաթների պարտադիր աշխատանքը զանազան արտակարգ պատահարների ժամանակ: Այս պարտավորությունը ևս շատ հաճախ փոխարինվում էր դրամական տուրքով (Հ. Դ. Փափազյան, նշվ. աշխ., պրակ I, էջ 105):
77. Չորանրիկի - چورانه - Տերմինը տրված է տեղական բյուրքական արտասանությամբ, պարսկական արտասանությամբ պետք է կարդալ «չուփանրեկի»: Սա մեծ մասամբ կանխիկ դրամով զանձվող այն հարկն էր, որ զանձվում էր մանր եղջերավոր անասուններից (Հ. Դ. Փափազյան, նշվ. աշխ., պրակ II, էջ 228):
78. Մուաֆ և Մուսալլամ - مسنم، معاف - համանիշներ: Հարկերից ազատված, հարկային իմունիտետ վայելող. գործածված է ինչպես անհատների, այնպես նաև օբյեկտների վերաբերյալ (Հ. Դ. Փափազյան, նշվ. աշխ., պրակ I, էջ 116):
79. Ամիլ - اميل - Դրանք այն պաշտոնյաներն էին, որոնք հաշվառման էին ենթարկում բոլոր հարկատու օբյեկտները, չափում ցանքսերն ու այգիները, ցուցակագրում բոլոր չափահաս աշխատունակ մարդկանց և ըստ այնմ որոշում, թե տվյալ օբյեկտից որքան հարկ պետք է զանձվի (Հ. Դ. Փափազյան, նշվ. աշխ., պրակ I, էջ 104):
80. Արվաթ-ի ջամ' - ارباب جمع - Այսպես կամ միայն «ջամ' - ج - ا» էր կոչվում հարկերի հաշվառման այն ձևը, երբ որևէ հարկատու օբյեկտից կամ առանձին գյուղական համայնքից զանձվող բոլոր պետական հարկերը մանրամասնությամբ հաշվվում էին և առանձին-առանձին հարկային մատյաններում գրանցվելուց հետո ի մի էին բերվում և ի վերջո դրամական արտահայտությամբ արձանագրվում որքա՞ն հարկ պետք է վճարի և դրանից որքանը ո՞ր հարկի հաշվից (Հ. Դ. Փափազյան, նշվ. աշխ., պրակ I, էջ 103):
81. Վիլայեթ - ولايت - Երկիր, երկրամաս, մահանգ: Աղբյուրներում և վավերագրերում գործածվում է փոփոխակի իմաստով: Երբեմն «վիլայեթ» անվան տակ հասկացվում էր մի ամբողջ երկիր, երբեմն ընդարձակ մահանգ, իսկ երբեմն նույնիսկ մեծ գավառ (Հ. Դ. Փափազյան, նշվ. աշխ., պրակ I, էջ 121):
82. 1748թ. հունվարի 2 - փետրվարի 1: